ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Երաժշտություն

(առարկա)

Թեմա՝ Աշուղական երգարվեստ

Կազմեց՝ Աննա Խաչատրյան

(անուն ազգանուն)

<<Գեղիի միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ

(դպրոցի անվանումը)

Ղեկավար՝ Մելինե Մինասյան

<<Կապանի N2 ավագ դպրոց >> ՊՈԱԿ

(Վերապատրաստող կազմակերպության անվանումը)

Կապան 2022

Բովանդակություն

Տիտղոսաթուղթ……..

Բովանդակություն……1

Ներածություն……2

Աշուղական արվեստ……3-5

Սայաթ-Նովա……...6-9

Մեծերի խոսքերը Սայաթ-Նովայի մասին……10

Քամանչա ……...11

Օրվա պլան……12

Եզրակացություն……..13

Գրական ցանկ……..14

Ներածություն

Յուրաքանչյուր ժողովուրդ, խոսակցական լեզվից բացի, ունի նաև երաժշտական լեզու:Յուրաքանչյուրի սուրբ պարտքն է լավ իմանալ իր ժողովրդի թե մայրենի և թե աշուղական երաժշտության լեզուն:

Սիրոց գնաց Սայաթ- Նովան:

Երգով եկավ,

Վերքով գնաց Սայաթ- Նովան:

Սիրով եկավ,

Սրով գնաց Սայաթ- Նովան:

Սիրով մնաց Սայաթ- Նովան:

Հովհաննես Թումանյան

Աշուղական երգարվեստ

Աշուղական երաժշտության մեջ կիրառվում են մեղեդու ծավալման երեք սկզբունքները՝ ասերգային,երգային և պարերգային:հայ աշուղական երաժշտության մեջ մեղեդիների ելևէջային հիմքը կազմում են շուրջ 20 ձայնեղանակներ:Գուսանների լավագույն երգերի երաժշտական ոճը աչքի է ընկնում հստակությամբ,պարզությամբ,զերծ ճոռոմությունից:Հայ գուսանները-գրում է Կոմիտասը, -ունեն ժողովրդականից անկախ,ինքնուրույն դպրոց:Աշուղական արվեստ ժողովրդապրոֆեսիոնալ ստեղծագործական և կատարողական արվեստ է, որը հատուկ է աշուղներին:Աշուղ է կոչվում ժողովրդական այն ստեղծագործությունները,որոնք երգի խոսքն ու երաժշտությունը կատարում են որևէ երաժշտական գործիքի նվագակցությամբ:Աշուղական երաժշտություն,ժողովրդական երգ ու նվագի դարավոր նվաճոիմների վրա հիմնված,կայուն ավանդույթներ ունեցող պրոֆեսիոնալ երաժշտություն:Նրա հատուկ մեղեդիները, գյուղական և քաղաքային ժողովրդական երգերի հեղինակների համեմատությամբ,ավելի ծավալուն են, ընդունակ կրելու հուզական, գաղափարական ավելի մեծ բեռնվածություն և աչքի են ընկնում չափածո տարբեր խոսքերի հետ կապված նպատակամետ շեշտադրությամբ ու կոմպոզիցիայի ակնառու գծով:Աշուղական երաժշտության մեջ լայնորեն օգտագործվում են երգի քառյակային ձևերը, միաժամանակ մշակվում են ավելի բարդ ձևեր:Աշուղական երաժշտության մեջ կիրառվում են մեղեդու ծավալման երեք սկզբունքները՝ ասերգային,երգային և պարային:Հայ աշուղական երաժշտության մեջ մեղեդիների ելևէջային հիմքը կազմում են շուրջ 20 ձայնեղանակներ,որոնք հանդիպում են նաև հայկական գյուղական, քաղաքային-ժողովրդական ու հոգևոր երգարվեստում:Հայ աշուղական երգ նվագը կատարողական առումով ևս ուրույն դպրոց է ներկայացնում ի տարբերություն ժողովրդականի՝ բնույթով համերգային է :Աշուղական կատարողական արվեստի հատկանիշներից է հանկարծաբանությունը,որը կատարվող երգն ու նվագը երբեմն զգալիորեն մոտեցնում է տեղն ու տեղը հորինված ստեղծագործությանը:Երգեցողությունը նվագի ընկերակցությամբ մատուցելու նպատակով հայ աշուղները տարբեր վայրերում և ժամանակներում օգտագործել են երաժշտական գործիքներ՝ սանթուր, քանոն, քամանչա, սազ, թամբուր, թառ, չոնգուր,քյամանի,,ջութակ:Աշուղական երգերի տեքստերը նվիրված են սիրային, սոցիալական,երգիծական և ուրշ թեմաների:Աշուղական արվեստը զգացմունքային է, կառուցվածքով ընդարձակ և ռիթմով ճկուն:Աշուղների հիմնական երաժշտական գործիքները լարային են:

Ինչպես միշտ,այս շրջանում էլ հայ աշուղների հորինված երգերի գերակշռող մասը սիրային է : Աշուղական սիրային երգերում արտահայտվել են սիրային զգացմունքի տարբեր նրբերանգներ:Միաժամանակ մեր աշուղներն ստեղծել են խաղեր պատմական դեպքերի մասին:Հորինել են երգիծական երգեր ագահ ու ժլատ հարուստների մասին:Իրենց այս կարգի երգերի մեջ նրանք աշխատում են գտնել չարիքի արմատը և որոշ դեպքերում գալիս են այն եզրակացության, որ դա փողն է՝ նոր կապիտալիստական աշխարհի շարժիչը: Աշուղ Զարգյարն ասում է. թե << Ով է հարցնում մարդկությանն, մարդ բառն փողն է, իմացեք>> և ապա ավելացնում է

<< Եթե փող ունես, աներկբա, ինչ որ պատահավ, գողացիր, Հարուստն ինչքան գողանա, աղքատն էնքան գող է, իմացեք>>:

Աշուղ Թուրինջը ավելի մեծ ընթանրացման է հասնում , գտնելով, որ իր համար <<ժամանակն վատացել ա >>,<<Էլ մարդ չի քաշիլ իմ քաշած դարդ ու սարերն>> և որ

<< Չարերն մոտեցել են, հեռացել են բարիներին,>>

<< Չունիմ էլ հաջողություն , դարի ձեռից գանգատ ունեմ >>:

Նույն ոգով է արտահայտում նաև աշուղ Քիչիկ – Նովան: Նման մտքեր ու խորհրդածություններ դարձյալ գտնել ինչպես 19- րդ դարի 1- ին կեսին, նույնպես և հետագա շրջանի աշուղական երգերում: Մշտապես լինելով ժողովրդի մեջ, նրանք լավ էին տեսնում ու զգում ժողովրդի վիճակը:Նրանք դեռևս իվիճակի չէին հասկանալու սոցիալական հակամարտությունների էությունը: Այս է պատճառը, որ նրանց երգերից շատերը դեռևս ունեին կրոնա-բարոյախոսական բովանդակություն:

Միայն 19-րդ դարի 2- րդ կեսին աշուղական երգերում տիրապետողը դառնում է գրական հայերենը:

Երաժշտական արվեստի տեսակետից տվյալ ժամանակաշրջանի աշուղական երգերը հետաքրքիր են: Այս և հետագա տարիների աշուղներն աշխատում են իրենց երգերի մեղեդիները մաքրել օտարամուտ տարրերից և դրանք դարձնել ավելի ամբողջական և հարազատ:Նրանք ջանքեր են գործադրում այդ լեզուն օտար և պատահական տարրերից ազատագրելու համար: Լեզվի մաքրման նպատակով նրանք դիմում են 18- րդ դարի աշուղական երաժշտության համեմատությամբ ավելի նոր ինտոնացիան ակունքների:Լեզվի տարրերի հետ միասին յուրացվում են նաև աշուղական երաժշտության համար նոր մի քանի ձևեր:Դժբախտաբար ժամանակին ձայնագրված չլինելու պատճառով, 19- րդ :

դարի 1 – ին կեսին աշուղների ինքնուրույն մեղեդիներից քչերն են պահպանվել: Դրանցից են օրինակ, աշուղ Շիրինի <<Այգեպան>>, <<Ակնարկյա>> և << Յափնջիս կորավ>>, Միսկին –Բուրջու << Էշխիցդ ջունուն դառած>> և <<Ախչի արի>>, Զարգյարի <<Աշչիկ մի գնալ>> և այլ երգեր:

Այս, ինչպես և մի շարք այլ երգեր, խորը կերպով մտնելով ժողովրդի կենցաղի մեջ, այսօր էլ շարունակում են իրենց կյանքը և գեղարվեստական հաճույք են պատճառում ունկնդիր հասարակությանը:

Այս շրջանի ամենանշանավոր գուսանը հանդիսացավ Շիրինը, որը թերև կարճ կյանք ունեցավ և ապրեց 30 տարի:

Սայաթ-Նովա

Սայաթ - Նովան մի նորօրինակ ձև չի, մոդա չի, որ ժամանակի ընթացքում ձանձրացնի ու փոխվի,նրան մին լսողը երկրորդ անգամ լսելիս ավելի պիտի սիրի, և մին հասկանալուց ու սիրելուց հետո երբեք չպիտի մոռանա:Գեղեցիկ ձևի մեջ մի մշտավառ հուր հոգի է նա, մի ազնիվ ու լիքը սիրտ,մի հարազատ հզոր շունչ, մեր աշխարհի հարազատ շնչի նման…

Եվ ի՜նչ գեղեցիկ է, ճշմարիտ մեր Սայաթ- Նովան մի հոյակապ սիրահար է,բռնված ու բռնկված սիրո հրդեհով, նրա լույսի տակ էլ նկատում է աշխարհքն ու իրերը. Զգում է,որ էրվում մերջանում է ինքը, բայց մնում է արի ու բարի, անչար ու անաչառ,վոհ ու վսեմ,որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը, հաստատուն սիրով և դեպի էն <<զալումը>>,որ իրեն կրակ տվեց ու միշտ մնաց անտարբեր, և դեպի նրանց, որոնք չորս կողմից տաքացան ու հրճվեցին էն կրակով,որի մեջ էրվում էր ինքը, և դեպի նրանց, որոնք հազար ու մի տեսակ իրեն վշտացրին կյանքում:Զայրացավ,բայց երբեք չանիծեց:

Հովհաննես Թումանյան

Սայաթ-Նովայի սերը, տառապանքն ու հումանիստական գաղափարներըզուրկ կլինեն հուզական ներգործության ուժից, եթե աշուղ բանաստեղծն ըստ ամենայնի չտիրապետեր իր արվեստի <<գործիքին>> գեղարվեստական խոսքին:Եռալեզու երգիչը ստեղծագործել է աշուղական երգի պարզ ու բարդ

բազմաթիվ տեսակներով (ղազալի,ղափիա,թասիբ,մուխամմաս,ավալ-ախր,դոշամա և այլն):Այս երգերում դրսևորվել է բանաստեղծ Սայաթ- Նովայի աշուղական-վարպետությունը:Սայաթ- Նովա հայ աշուղական բանաստեղծը առաջինը լինելով, ստեղծագործել է թիֆլիսահայ բարնառով, վեր հանելով այդ բարբառի քերականակա-ձևաբանական լայն հնարավորությունները,ճկունությունը, բառային հպարտությունն ու գունագեղությունը,այն դարձնելով բարձր քնարերգության լեզու:Հայ տաղեգունների լեզուն Սայաթ-Նովայի ժամանակ վաղուց արդեն գեղարվեստորեն <<սպառված է>> ,ուստի միջնադարի վերջին հայ բանաստեղծը՝ Սայաթ- Նովան,ընդունելով այդ լեզուն, ձկտեց և ստեղծեց մի առանձնահատուկ բանաստեղծական լեզուն:Առանձնահատուկ բանաստեղծական լեզվով է նաև պայմանավորված Սայաթ- Նովայի ոճական յուրահատկությունը:Աշուղ-բանաստեղծը իր երգերն ուղել է ժողովրդական լայն լսարանի,հավակնելով մարդկանց հավակնությանն ու դրվատանքին:Քամանչային նվիրված հանրահայտ խաղի մեջ նա ասել է. <<Խալինին էս իլթիմազն առա , սարին՝ ապրիր քու ածողըն>>:Սայաթ-Նովան եղել է աշուղ:Դա ստեղծագործողի մի տիպ է,որն իր նախնական գծով ու նշանակությամբ այժմ գոյություն չունի մեր իրականության մեջ:ՈՒստի Սայաթ –Նովային ավելի լավ ճանաչելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ է աշուղն ու աշուղությունը:Աշուղությունը մասնագետ երգիչ- երաժիշտների հարուստություն է,որը կազմավորվել է հայ գուսանական և պարսակա-արաբական բանաստեղծության ու երգարվեստի հիմքի վրա:Սայաթ-Նովան,թերևս մենակ լինելով մեզանում,իր մեջ համատեղում է աշուղին և բանաստեղծին:Ինչպես բոլոր աշուղները,Սայաթ-Նովան սիրերգել խրատաբանել է՝ օգտագործելով աշուղական բանարվեստն ու երաժշտությունը:Աշուղների՝ հիմնականում ձևով ու բովանդակությամբ պարզունակ ու միօրինակ խաղերից շահեկանորեն տարբերվում է աշուղ-բանաստեղծ Սայաթ- Նովայի երգը,երպես լիարյուն գունագեղ քնարերգություն:Նրա ինքնօրինակ խոսքը չես շփոթի ուրիշ ոչ մեկի հետ:Նրա պատկերները կենդանի են ջերմ ու խորապես ապրած զգացմունքներով լեցուն:Աշուղական ճնշիչ կաղապարների մեջ Սայաթ-Նովան կարողացել է իր անհատականության ուժով,բանաստեղծական պատկերավորման , արտահայտչական միջոցներոց ու ազդեցիկ երաժշտական լեզվով արտահայտել խոր ու անկեղծ զգացմունքներ,բարձր մարդասիրական գաղափարներ:Այսպիսով,ուրեմն,ի դեմս Սայաթ-Նովայի, ունենք աշուղ-բանաստեղծի մի մարդ ու խիստ յուրահատուկ հեղինակային տիպ,որ թերևս եզակի երևույթ է գրականության պատմության մեջ:Անհրաժեշտ է նշել նաև,որ արևելյան-աշուղական ձևերի մեջ Սայաթ-Նովան հանդես է եկել որպես արևմուտքցի-քրիստոնյա բանաստեղծ:Նրա ստեղծագործությունը իր հիմնական հատկանիշներով միջնադարյան է՝ որպես միջնադարյան հայ աշխարհիկ տաղերգության մի յուրօրինակ դրսևորում: Սայաթ-Նովան չափազանց զգայուն է

եղել բառի հնչունային նրբերանգների նկատմամբ և գիտակցակլան կամ բանաստեղծական ինտուիցիայով կատարել է հոմանիշ բառերի կամ բառաձևերի ճիշտ ընտրություն:Մեծ սեր ու տառապանք , մարդասիրական բարձր գաղափարներ՝ արտահայտված բանաստեղծական գեղեցիկ ու ինքնատիպ դերի մեջ,կամ Հովհաննես Թումանյանի խոսքերով ասած, <<Գեղեցիկ ձևի մեջ մի մշտավառ հուր հոգի, մի ազնիվ ու լիքը սիրտ, մի հարազատ հզոր շունչ>>,այս էր,ահա, աշուղ բանաստեղծ Սայաթ-Նովայի գեղարվեստական մեծությունը:Մեծ բանաստեղծին մոռացված բանաստեղծություններին հարություն տվող ր սայաթնովագիտության հիմնադիրը եղել է հայագետ Գ. Հախվերդյանը:1848թ.-ի մայիսին ձեռք բերելով աշուղի Դավթարը հետազոտական քրտնաջան աշխատանքից ու որոնումներից հետո 1852թ.-ին լույս է ընծայել Սայաթ-Նովայի հայ խաղերի առաջին ժողովածուն (46 խաղ) կցելով բանաստեղծի կենսագրությունը,Թիֆլիսի բարբառի քննությունը և առանձին ոտոնավորների բառապաշարներին վերաբերվող արժեքավոր մեկնաբանություններ:դա ծրագրված Գուսանք մատենաշարի միակ գիրքը եղավ:Ախվերդյանի ազդեցությամբ ռուս բանաստեղծ Յա. Պոլոնսկին Սայաթ-Նովայի մի քանի խաղ թարգմանել է ռուսերեն և նրա մասին ուսումնասիրություն հրապարակել Թիֆլիսի կավկազ թերթում 1851,1852:Հետագայում նոր խաղեր են հայտնաբերել ու հրատարակել բանասերներ Գ. Տեր Աղեքսանդրյանը 1885,Գ Ասատուրը 1903, աշուղ Սկանդար-Նավեն 1912, և ուրշներ: Սայաթ-Նովայի գրական ժառանգությունը ժողովրդականացնելու գործում մեծ վաստակ ունեն Հ. Թումանյանը, նկարիչ Գ. Բաշինջաղյանը և ուրշներ,որոնց ջանքերով 1913 թ.-ին տենվել է մեծ երգչի ծննդյան 200-ամյա հոբելյանը և 1914թ.-ին հրատարակվել հայկական խաղերի առավել լրիվ ժողովածուն <<Սայաթ-Նովա>>:Սայաթնովագրությունը բուռն զարգացում ապրեց սեվետական կարգերի հաստատումից հետո ինչպես մայր հայրենիքում,այնպես էլ սփյուռքում:Հրատարակվեսցին նոր ժողովածուներ,գրվեցին հետազոտություններ:Այդ մարզում իրենց ներդրումն ունեն բանասերներ Գ. Լևոնյանը, Ռ. Աբրահամյանը,Հ. Զավրյանը,Ն. Աղբալյանը և ուրշներ:Ամենից ավելի՝ Մ. Հասրաթյանը,որը կազմեց Սայաթ-Նովայի <<Հայերեն,վրացերեն,ադրբեջաներեն խաղերի>>նոր և ամենաընդարձակ ժողովածուն,թարգմանել վրացերեն32 և ադրբեջաներեն 85 խաղ,գրել ուշագրավ մեկնաբանություններ տվել Սայաթ-Նովայի խաղերն անփոփող Դավթարի նկարագրությունը, մեկնաբանել բանաստեղծի երգերի բառապաշարը:Սայաթ-Նովայի եղանակների հիմքը հայ մոնոդիկ երաժշտությունն է ,այդ երաժշտության ինտոնեցիաները և դրանցով բացահայտվոց ձայնակարգերն իրենց էական հատկանիներով կազմում են նրա մեղեդիների ձևակառուցման գլխավոր գործոնը:Սայաթ-Նովան աշուղի երաժշտական արվեստը նաև որոշ տարրեր ու բնորոշ գծեր է ներառել Թիֆլիսի կենցաղային երաժշտությունից,որն այն ժամանակ միավորում էր մեձավորարևելյան երաժշտության մաս կազմող բազմազան ազգային ավանդույթներ:Այդ բոլոր տարրերը,թե աշուղի սեփական և թե օգտագործած ավանդական եղանակներում, իր՝ հեղինակի ստեղծագործական մտածելակերպի համաձայն խմբագրվել են վերաձուլվել ու վերարտադրվել մի մասնական ոճում,որը բնութագրվում է սայաթնովյան ոճ:

Սայաթ-Նովայի երգերի ներկայումս հայտնի եղանակները մեծ մասամբ ակնառու վարպետության արգասիք են:Ընդհանուր բնույթով աշուղական՝ դրանք օգտագործում են ինչպես երգային,այնպես էլ այսերգային հնարներ,համանման սկզբունքներով ծավալով ավարտունն ձևերում երևան են բերում ներքին նկատելի բազմազանություն: Երբեմն մեղեդիները հոսում են տարբեր ձայնակարգերի բարդ զուգորդումներով (<<Բլբուլի հիդ>>). Մեղեդիական միևնույն կառույցի տարբերակումներով գոյանում են ընդարձակ կառուցվածքներ (<<Դուն են գլխեն իմաստուն իս>>)որի հեղինակը՝Չարգյահի ձայնարկում՝ ավանդաբար գալիս է Բաղտասար Դպիրի ի ննջմանդ արքայական տաղից:Հետաքրքրական են միջնադարյան այլ տաղերի ու գուսանական նվագարանային երաժշտության տարրեր օգտագործող լայնածոր մեղեդիները(<<Մե խոսք ունիմ>> երգի 2-րդ տարբերակը) մետրական առանձնապես դինամիկ հիմք ունեցող նմուշները(<<Էշին վառ կրակ>> երգում՝8/8 և 7/8 խառը չափերի զուգորդումը:Պարային ռիթմական կերտվածք ունեցող եղանակներում միևնույն մետրի տարբեր մեկնաբանումը (<<Պատկիրքդ դալամով քաշած>>) բանաստեղծության չափի,ռիթմի շեշտականության ճշգրիտ երաժշտականացումը (<<Փահրադն մեռած>>, <<Քանի վուր ջան իմ>>):Բոլոր երգերը հուզառատ են, ինչպես վայել է իսկական աշուղական երգին:Հատկապես ասերգային նմուշներում քոսքի արտաբերումն հասնում է խորագույն արտահայտչության(<<Առանց քեզ ինչ կոնի >>):Մեզ հասած երգերը թեև փոքրաքանակ են,բայց ընդգրկում են հայ աշուղական երգի ռիթմաինտոնացիոն և ձևային կարևորագույն բոլոր ըեսակները:Միասնական ոճի սահմաններում յուրաքանչյուր երգ ինքնատիպ է չունի իր սեփական դեմքը:Դրանով Սայաթ-Նովա երգահանը անհամեմատ բարձր է կանգնած սոսկ ավանդական եղանակներով ու դրանց տարբերակումներով երգած աշուղներից: Սայաթ-Նովան ման նշանավոր երաժիշտ-կատարող է եղել,ունեցել է քաղցր ձայն երգեցողությունն ուղեկցել է՝ նախ սազի,ապա թամբուրի և չոնգուրի,ի վերջո իր ամենասիրած քամանչայի վարպետ նվագով:Իր արվեստով նա ոչ միայն մեջլիսներ է զարդարել,այլև արդեն այն ժամանակ լան ժողովրդականություն է վաստակել: Սայաթ-Նովաի արվեստը մեծ դեր է կատարել Անդրկովկասի աճուղության զարգացման գորշում, նկատելի ազդեցություն է ունեցել նաև կոմպոզիտորական ստեղծագործության վրա: Սայաթ-Նովայի երգերը սովետահայ կոմպոզիտորներից շատերը մշակել են դաշնամուրային,անսամբլային և սիմֆոնիկ նվագակցությամբ մեներգելու, ինչպես և երգչախմբով ու ակապելլա կատարելու համար: Սայաթ-Նովա օպերա է հեղինակել կոմպոզիտոր Ա. Հարությունյանը:Երբ ասում ենք Սայաթ-Նովա, հասկանում ենք այն երևակայելի մի մեծություն,որ կանգնած է ոչ միայն հայոց մեծերի՝ այլև համաշխարհային մեծությունների կողքին, սիրված և մեծարված ողջ մարդկության կողմից:Հավերժ փառք ու պատիվ հայ ժողովրդին,որ թեպետ դարեր շարունակ տառապել ու հալածվել է անկիրթ,անմակարդակ ու անզգա ցեղերի կողմից սակայն, այդ հալածանքների ու տառապանքների մեջ և դարեր շարունակ նա մարդկությանն է տվել արվեստի ու մշակույթի, գիր ու գրականության աշխարհահռչակ զավակներ,ահա հենց ճիշտ այնպես,ինչպես մի Սայիադ-Նովա:Եվ ճիծտ չէ ասել Սայիադ-Նովա,որովհետև նա սիրված ու մեծարված է ոչ միայն մեր ազգում,այլև ողջ մարդկության մեջ:

Մեծերը Սայաթ-Նովայի մասին

<<Ոսկի բառեր,անգին քարեր,

Լալ ու գոհար շարել ես դու,

Քեզ միայն քո յարն է վառել,

Քանի յարեր վառել ես դու...>>

Եղիշե Չարենց

<<Սայաթ-Նովայն մինչև հիմա կախարդել է ինձ և չեմ կարող ելնել երևակայական դյութանքից>>:

Ավետիք Իսահակյան

<<...Մեր վիթխարի Սայաթ-Նովայն հոյակապ սիրահայ է, բռնված ու բռնկված սիրո հրդեհով լույսի տակ էլ նկարվում է աշխարհքն ու իրերը, զգում է,որ էրվում, վերջանում է ինքը,բայց մնում է արի ու բարի,անչար ու անաչառ, վեհ ու վսեմ, որպես աշխարհքի ու մարդու մեծ բարեկամը>>:

Հովհաննես Թումանյան

<<Սայաթ-Նովան այնպես ստեղծագործեց,որ մտավ երեք ժողովրդի գրականության մեջ:Ոչ թե գրականության պատմության,այլ գրականության մեջ՝ կենդանի և ապրող,կարդացվող ու երգող, միշտ ճարվող,բայց միշտ փնտրվող գրականության մեջ:Մտավ իբրև աղ:Այսքանով էլ Սայաթ-Նովան անհատ չէ, թեկուզ և մեծ անհատ,այլև ժամանակ լցնող շունչ է,տարածություն լցնող օդ, և այդպիսին մնում է մինչև՝ 200 տարի հետո էլ>>:

Պարույր Սևակ

Քամանչա

Անվանումը-Կարսում այս նվագարանն անվանում էին ճանուր:Ագուլիսում և նրա շրջակայքում ասել են <<ճնկըռ>>,բայց ամենից շատ այն հայտնի է քամանչա անունով:<<Քամանչա>> անվանումը համարվում է պարսկական կամ արաբական: <<Քամանչա>> բառը թարգմանաբար նշանակում է քնար՝ ոտքի վրա: Մի կողմ թողնելով գործիքի ծագումնաբանության խնդիրը,առավել կարևոր է, թե տվյալ նվագարանն ինչ ինքնատիպ բովանդակություն և զարգացում է ունեցել որևէ ժողովրդի մշակութային կյանքում,և թե ինչպես է զարգացրել այն տվյալ ժողովուրդը:Քամանչայի ամենահին պատկերը գտնվում է Հայաստանում՝ միջնադարյան մայրաքաղաք Դվինի պեղումների ժամանակ հայտնաբերված մի գավաթի վրա. Պատկերված է IX-X_րդ դարերում:Քամանչան շատ գեղեցիկ ներկայացնում է Սայաթ-Նովան, նա համարվում է քամանչա նվագող վարպետաց վարպետ:Սայաթ-Նովան շատ գեղեցիկ ներկայացնում է այդ գործիքը իր <<Քամանչա>> երգում:

<<Քամանչա>> -Սեր,մահ,երազանք,տենչեր,վիշտ,թախիծ,տիեզերական վիշտ, արևելյան երաժշտություն՝ հայկական անհատականության միջոցով անցած,հայկական մշակույթի միջով անցած… Արևելքը՝ հայկական բեկումով… Նայել է՝ աշխարհը մի պատուհան է:Նայում է աշխարհի պատուհանից մեծ,անհուն,անսահման աշխարհին,իրականությանը, և խոցվում է նրա սիրտը,ձեռքն է առնում քամանչան… և երգում է աշխարհի վիշտը,ցավերը տառապանքները…:

Օրվա պլան

Դասարան 5-րդ, դաս 3

Դասի թեման - Աշուղական երգ, Սայաթ-Նովա

Ունկնդրում - Ունկնդրել <<Քամանչա>> երգը

Ուսուցանել - <<Քամանչա>> երգը

Դասի նպատակը - Ծանոթացնել Սայաթ – Նովա աշուղին: Ուսուցանել <<Քամանչա>> երգը

Ուսուցանող - Ծանոթացնել աշուղական երգարվեստի հետ:Ծանոթացնել նաև աշուղ՝ սայաթ-Նովայի գործիքին՝ <<Քամանչա>>

Զարգացնող – Զարգացնել աշուղական երգարվեստը հասկանալու, և երգը մաքուր հնչողությամբ կատարելու կարողությունը

Դաստիարակող - Դաստիրակել սերը աշուղական երգարվեստի հանդեպ

Մեթոդական հնարքներ - Մտագրոհ, T- աձև աղուսյակ

Միջառարկայական կապ - Գրականություն, պատմություն

Դասի ընթացքը

Խթանում - Մտագրոհ մեթոդի միջոցով ճշտել աշակերտների նախնական գիտելիքներն աշուղական արվեստի մասին

Իմաստի ընկալում – Ծանոթացնել աշուղական արվեստի հետ, աշուղ՝ Սայաթ – Նովային, ուսուցանել երգը

Կշռադատում - T- աձև աղուսյակի միջոցով ներկայացնել աշուղական և կոմպոզիտորական երգարվեստի առանձնահատկությունը:Աշխատել աշխատանքային տետրում

Եզրակացություն

Բացառիկ էր Սայաթ-Նովայի հոգատարությունն իր ազգի,և իր մշակույթի նկատմամբ: Աշակերտները ուսումնասիրում են Սայաթ-Նովայի կյանքը ունկնդրում նրա երգերը և ծանոթանում աշուղ Սայաթ-Նովայի նվագարանին՝ քամանչային:Նրա ստեղծագործության հիմքում ընկած է ազատություն,ազնվություն,բարություն:

Այսպիսով աշակերտները գիտակցում են,որ աշուղական երգարվեստում արտահայտում են մարդկային խորը զգացմունքներ,մտքեր, տրամադրություն, վերաբերմունք կյանքի նկատմամբ:

Գրական ցանկ

Վիքիպեդիա https://hy.m.wikipedia.org

Հենրիկ Բախչինյան

Յուրի Յուզբաշյան

Կարինե Ղազարյան

Հայկական սովետական հանրագիտարան